ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«___» ապրիլի 2012թ. N_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2012 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Երևանի Կ. Ուլնեցու փողոցի 1-ին փակուղի հ.5 շենքի հ.27ա բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 11.07.2011թ.հ. 2787431 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սարգիս Հակոբյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սարգիս Հակոբյանը դիմել է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Կ.Ուլնեցու փողոցի 1-ին փակուղի հ.5 շենքի հ.27ա՝ 48.2 մակերեսով բնակարանը մասնավորեցնելու խնդրանքով:

1975 թվականից մինչ օրս Սարգիս Հակոբյանի ընտանիքն ինն անձով բնակվում է Կ.ՈԻլնեցու փողոցի 1-ին փակուղի հ.5 շենքի հ.38՝ 64.3 ընդհանուր մակերեսով բնակարանում, իսկ նշված բնակարանը համատեղ սեփականության իրավունքով պատկանում է 8 անձի (հիմք՝անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 13.03.2003թ. հ.1004273 վկայական):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տեղեկատվական կենտրոնի տվյալների համաձայն, Սարգիս Հակոբյանի անվամբ Երևան, Կ.Ուլնեցու 1 փողոցի հ.5 շենքի հ.38 բնակարանի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք:

1989 թվականին Երևանի «ԵրԱԶ» ավտոմոբիլային գործարանի տնօրինությունը դիմել է Երևանի նախկին Խորհրդային շրջգործկոմ՝ որպես բազմանդամ ընտանիքի Սարգիս Հակոբյանին Կ.Ուլնեցու փողոցի 1-ին փակուղի հ.5 հասցեում մեկ սենյականոց բնակարան հատկացնելու միջնորդությամբ, սակայն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո հարցը մնացել է չլուծված:

Սարգիս Հակոբյանը փաստացի բնակվում է Կ.Ուլնեցու փողոցի 1-ին փակուղի հ.5 շենքի հ.27ա մեկ սենյականոց բնակարանում (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին 30.05.2011թ. հ.176855 տեղեկանք):

Նախկինում նշված բնակարանն ընդգրկված է եղել ոչ բնակելի ֆոնդում և քաղաքացին հնարավորություն չի ունեցել հաշվառվելու Կ.Ուլնեցու փողոցի 1-ին փակուղի հ.5 շենքի հ.27ա հասցեում: Ներկայումս այն հաշվառվել է բնակելի ֆոնդում և դրա նկատմամբ կատարվել է Երևան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում:

Նկատի ունենալով, որ քաղաքացին փաստացի առանց հաշվառման է բնակում նշված հասցեում, ինչպես նաև առկա չէ նշված բնակարանի հատկացման վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ (օրդեր, դատարանի վճիռ և այլն), իսկ Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N345-Ն որոշմամբ հաստատված ծրագրի համաձայն Երևանի քաղաքապետի որոշմամբ կարող են սեփականության իրավունքով անհատույց օտարվել համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանները կամ բնակելի տներն այն անձանց, ովքեր փաստացի բնակվում և հաշվառված են տվյալ բնակարաններում կամ բնակելի տներում, Կ. Ուլնեցու փողոցի 1-ին փակուղի հ.5 շենքի հ.27ա հասցեում գտնվող բնակարանը սեփականության իրավունքով Սարգիս Հակոբյանին անհատույց օտարելու համար անհրաժեշտություն է առաջացել կայացնելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ